ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հունիսի 2025 թվականի N 723

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 16-ին անցկացվելիք հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 6 նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով

•***/նախագիծ 54-Ն/*** Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

•***/նախագիծ 55-Ա/*** Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

•***/նախագիծ 56-Ա/*** Չարենցավան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

1.2. Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով՝

• ***/նախագիծ 57-Ա/*** Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 110–Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

1.3.Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝

• ***/նախագիծ 58-Ա/*** Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող շինության զբաղեցրած հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

• ***/նախագիծ 59-Ա/*** Կոտայքի մարզի Չարենցավան համայնքին Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամաս 19-րդ շենք թիվ 2 հասցեում գտնվող գրադարանի շենքի նվիրաբերությունն ընդունելու մասին:

• ***/նախագիծ 61-Ա/*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

1.4. Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողով

- */նախագիծ 60-Ա/* Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու և Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 100-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը ուժը կորցրած ճանաչելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**